ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 560 360
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

20.03.2013թ.
194-ի 9

ՀՀ վարչապետ
պարոն Տիգրան Սարգսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

Շնորհակալ ենք մեր՝ 22.02.2013թ.-ին ՀՀ կառավարությանն ուղղված թիվ 194-5 հարցմանը տրամադրած պատասխան գրության համար, սակայն հարցմամբ ներկայացված հարցերից մեկը մնացել է անպատասխան:

ՀՀ կառավարությանն ուղղված վերոնշյալ հարցմամբ խնդրել էինք նաեւ հայտնել.

1. ՀՀ կառավարությունը ՀՀ-ում գործող ո՞ր հասարակական կազմակերպություններին է գումար հատկացրել 2010, 2011 եւ 2012թթ.-ին (խնդրում ենք նշել, թե որ ՀԿ-ին որքան գումար է հատկացվել ըստ տարիների):

Սակայն ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված պատասխան գրությամբ ներկայացվել են ՀԿ-ներին հատկացված գումարներն ըստ ՀԿ-ների գործունեության ոլորտի (առողջապահություն, մշակույթ եւ այլն), այլնինչ խնդրել էինք տրամադրել դրամաշնորհ ստացած ՀԿ-ների անվանումները:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել, թե ՀՀ կառավարությունը ՀՀ-ում գործող ո՞ր հասարակական կազմակերպություններին է գումար հատկացրել 2010, 2011 եւ 2012թթ.-ին (ՀԿ-ների անվանական ցանկ), եւ նշել, թե յուրաքանչյուր ՀԿ-ին որքան գումար է հատկացվել:

Կանխավ շնորհակալ եմ:

Կից ներկայացնում ենք ՀՀ ֆինանսների նախարարության պատասխան գրության պատճենը:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան